

ԳԵՂԱՐՔՈՒՄԻՔԻ

ՏԱՐԱԾԱՇՇՐՁԱՆՆԻՔԻ ՊԵՏԱԿԱՆ

ՔՈՒՆՑ ՊՈՒՅ

տեղին

Սուբիսպան Ցուրա Լապատյանի

Handwritten signature



20__ 01__ 2020թ.

22 Կիսուկյան և ֆիտուկյան

տախաբարություն

ՔՈՒՆՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՆԷ

Նիկոլյան Կարոն Գաբրիելյանի

Handwritten signature

(ստորագրողի Գ)

20__ 01__ 2020թ.

Գ. Ց.

« ԳԵՂԱՐՔՈՒՄԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՇՐՁՄԱՆ ԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՒՆԵԶ »
ՊԵՏԱԿԱՆ ՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ /2020-2025/

Մարտունի 2020թ.

<<ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՁ>> ՊՈԱԿ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործող <<Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որն ունի 45 տարվա պատմություն: Քոլեջը հիմնադրվել է 1972 թվականին և կոչվել <<Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումի Մարտունու մ/ճ>>: 1977 թվականին կազմավորվել է որպես <<Մարտունու ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում>>, 2001 թվականին վերանվանվել է <<Մարտունու պետական քոլեջ>>, 2002 թվականին քոլեջին միացել է <<Երևանի հումանիտար քոլեջի Մարտունու մ/ճ>>-ը, 2011 թվականին վերանվանվել է <<Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ, իսկ 2011 թվականի դեկտեմբերին քոլեջին միացել է <<Մարտունու արհեստագործական ուսումնարան>> ՊՈԱԿ-ը: Իր գոյության տարիներին քոլեջը բազմապիսի մասնագիտություններով բազմաթիվ կադրեր է պատրաստել, որոնք աշխատել և աշխատում են հանրապետության մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում: Քոլեջը տարիների ընթացքում ձեռք է բերել բարձր վարկանիշ՝ իր մատուցած կրթությամբ, մրցունակ կադրերով և իրականացված մշտադիտարկումների արդյունքներով:

ՔՆՆԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Քոլեջը, որպես ազգային կրթական համակարգի մի մասնիկ, որը նպաստում է անհատի մտավոր, բարոյական և քաղաքացիական որակների ձևավորմանը, ապահովել և կշարունակի ապահովել իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում որակյալ կրթություն շահագրգիռ կողմերին՝ ապահովելով կրթության որակի արտաքին և ներքին գնահատման չափանիշները:

ՔՆՆԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի հիմնական առաքելությունն է՝

- գիտելիքի ստեղծում, փոխանցում և տարածում,
- սովորողների ազգային մտածելակերպի ձևավորում,
- սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստում,
- որակյալ մասնագետների պատրաստում տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,
- կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճի ապահովում,
- տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժի զարգացում:

Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջն ապահովում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունն և հավասարությունը:

Կարևորելով և գիտակցելով նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների դերն ու նշանակությունը, Քոլեջն առաքելություն ունի նաև հասարակության մեջ ձևավորել գիտելիքի, մասնագետի և կրթության մասին այն արժեքների և ընկալումների համակարգը, որն անհրաժեշտորեն պետք է ուղված լինի մեր քաղաքացու, հասարակության և պետության զարգացմանը և հզորացմանը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՆՊԱՏԱԿԸ

Քոլեջի նպատակն է կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նպատակային փորձարարական և նորարարական ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ, ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ, դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման և տարածաշրջանային բազմագործառության կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդող, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջներին ու անձի պահանջումներին համապատասխան: Հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

Քոլեջի նպատակներից է նաև դառնալ ուսանողական կենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքին և մասնագիտական կարիերային:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ուրվագծել նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումներ, ճշտել այն խնդիրների ցանկը, որոնք պետք է պատրաստ լինի լուծել նոր տիպի քոլեջը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար:
2. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:
3. Կատարելագործել և հզորացնել որակի ներքին ապահովման համակարգը՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

4. Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:
5. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Քոլեջի ուսումնական գործընթացներում:
6. Շարունակել բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր, ինչպես նաև բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:
7. Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:
8. Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Քոլեջի ուսումնական լաբորատոր բազան:
9. Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական, մշակութային և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները:
10. Ժամանակակից չափանիշներին համապատասխան վերափոխել և զարգացնել Քոլեջի տեղեկատվական բազան, ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:
11. Դառնալ ավելի նախաձեռնող Քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում: Ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը Քոլեջի ռազմավարական նպատակներին և խնդիրներին:
12. Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ավելի առարկայական դարձնել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը, նպաստել հաստատությունում գործող ուսանողական խորհրդի հզորացմանը:

13. Շարունակել Քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացման հզորացումը, էլ ավելի մեծացնել գործակցային կապերը աշխատաշուկայի՝ հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Քոլեջն ունի որոշակի առավելություններ, որոնք այս պահին նրան շուկայում առաջատար են դարձնում.

- Հազեցած է համակարգչային նոր տեխնիկայով և ունի համակարգչային սենյակ:
- Ունի նոր կահույքով հազեցած լսարաններ:
- Ունի տեխնիկայով և սարքավորումներով համալրված լաբորատորիաներ:
- Ունի կարճաժամկետ դասընթացներ կազմակերպելու համար նախատեսված վարսավիրանոց՝ համապատասխան բոլոր միջոցներով:
- Վերանորոգված և հազեցած սպորտդահլիճ:
- Վերապատրաստված և համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ:
- Կենտրոնական ջեռուցման համակարգ:
- Վերանորոգված շենք, բարեկարգ տարածք:
- Քոլեջում ուսուցումն իրականացվում է կարողություններին միտված ուսումնական ծրագրերով:
- Քոլեջը գտնվում է մարզկենտրոնում և տրանսպորտային առումով մատչելի է:

0601, 0604 , 2203 մասնագիտությունների գծով կայուն պահանջարկ կա, որովհետև ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ծրագիր ունեցող անձանց շրջանակը հաստատուն կերպով մեծանում է, իսկ նրանց համապատասխան մասնագետ աշխատողներ են պետք:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Քոլեջում աշխատում են վերապատրաստումներ անցած և բարձր որակավորում ունեցող դասախոսներ, վարչական, օժանդակ և սպասարկող աշխատակիցներ:

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական բոլեջի գործառույթների բնույթը և շրջանակները

Քոլեջն իր կանոնադրության համաձայն կարող է իրականացնել հետևյալ գործառույթներ.

ա/ միջին մասնագիտական, նախնական մասնագիտական արհեստագործական կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.

բ/ արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

գ/ նախապատրաստական դասընթացների կազմակերպում.

դ/ մասնագիտական ուսուցման դասընթացի կազմակերպում.

ե/ կադրերի վերապատրաստում, վերաորակավորում և որակավորման բարձրացում.

զ/ գիտահետազոտական աշխատանքների իրականացում.

է/ ուսանողների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնասիրտադրական գործունեության և սպասարկման ծառայությունների իրականացում.

ը/ հրատարակչական գործունեության իրականացում.

թ/ սովորողների հանրային սննդի կազմակերպում.

ժ/ սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում.

ժա/ ուսանողների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված մշակութային գործունեության իրականացում:

Քոլեջն իր գործունեության հետ կապված ունի նաև սահմանափակումներ:

1. Քոլեջը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:
2. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
3. Խոշոր գործարքը կարող է կատարվել լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

Գեղարքունիք տարածաշրջանային պետական քոլեջի դերը տվյալ ոլորտում

Նշված մասնագիտությունների գծով՝ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրով, կրթական ծառայությունները մատուցելու առումով քոլեջը միակը չէ մարզում: Սակայն տարածաշրջանային կենտրոն լինելու հանգամանքը և ԵՄ կողմից իրականացվող աջակցության ծրագիրը հստակ առավելություն է ընձեռում, որոնք քոլեջի հնարավորությունները շուկայում դարձնում են գերադասելի: Դրանք են.

- քոլեջի նյութատեխնիկական հնարավորությունները ավելի մեծ են, ունի ժամանակակից սարքավորումներ, ուսուցման տեխնիկական միջոցներ, կահավորված տարբեր առարկայական և համակարգչային կաբինետներ, նորագույն սարքավորումներով հագեցած արհեստանոցներ, տեսասարքերի լսարան, ինտերակտիվ դասավանդման կաբինետ, հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ:
- քոլեջում մասնագիտական առարկաները պարապում են տվյալ ոլորտում գործնական աշխատանքի փորձ ունեցող և բազմիցս վերապատրաստված մասնագետներ,
- քոլեջում ուսուցումն իրականացվում է ուսանողակենտրոն, կարողություններին միտված ուսումնական պլաններով,
- քոլեջն ապահովում է շարունակական կրթությունը ԲՈՒՀ-երում (կնքված են պայմանագրեր Գյուղատնտեսական ակադեմիայի, Տնտեսագիտական համալսարանի, Ճարտարագիտական համալսարանի, Մանկավարժական համալսարանի և Գավառի պետական համալսարանի հետ):
- քոլեջն ունի հաստատված համաձայնագրեր մարզի նշված քոլեջների՝ <<Վարդենիսի պետական քոլեջի>>, <<Սևանի պետական քոլեջի>>, <<Մարտունու պետական բժշկական քոլեջի>> հետ, ըստ որի քոլեջների միջև հաստատվում է գործընկերային հարաբերություններ՝ 1.կարիերայի կենտրոնների ստեղծման և մասնագիտական կողմնորոշման

աշխատանքների իրականացման փորձի փոխանակման, 2. հաստատությունների վարչական անձնակազմի և դասավանդողների փորձի փոխանակման և վերապատրաստման, 3. առկա նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործման, որոնք էլ կնպաստեն քոլեջների միջև կրթական, մշակութային հարաբերությունների զարգացմանը:

Համաձայնագրերում ամրագրված նպատակների իրականացման համար միջնաժամկետ շրջանում անհրաժեշտ են ֆինանսական ներդրումներ.

- կարիերայի կենտրոնների ստեղծման և մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման փորձի փոխանակման համար 350.0 հազար դրամ,
- հաստատությունների վարչական անձնակազմի և դասավանդողների փորձի փոխանակման և վերապատրաստման համար 350.0 հազար դրամ,
- առկա նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործման համար 350,0 հազար դրամ:

Ձևավորված է տարիներ շարունակ գործող ու զարգացող սոցգործընկերություն տարածաշրջանում ճանաչված այնպիսի կազմակերպությունների ու ձեռնարկությունների հետ, ինչպիսիք են՝ <<ԱՇԲ>> Մարտունու մ/ճ, <<Հայէկոնոմբանկ>> Մարտունու մ/ճ, Մարտունու <<Տարածքային հարկային տեսչություն>>, <<Մարտունու կոմունալ ծառայություն հիմնարկ>>, ՀԷՑ <<Գեղամա>> մ/ճ, Մարտունու ԳԳՄ, Մարտունու ոստիկանություն, Մարտունու դատարան, <<ՀՀ Զբաղվածության պետական ծառայություն>>, Ա/Զ-ներ Ժ. Խլղաթյան, Կ. Նիկոյան, Ն. Ավետիսյան և 10- ից ավելի մի շարք այլ կազմակերպություններ:

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի նպատակները և դրանց իրագործման համար քոլեջի կողմից իրականացվող ծառայությունների ամփոփ նկարագրությունը

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Նպատակը, որի իրագործմանը նպաստում է տվյալ ծառայությունը
1.	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտությամբ հաշվապահի որակավորմամբ կադրերի պատրաստում	<p>Հիմնական կրթությամբ աշակերտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ):</p> <p>Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ):</p> <p>Հիմնական շահառուներ են հանդիսանում 15-ից բարձր տարիք ունեցող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:</p>	<p>Հաշվապահի որակավորմամբ շրջանավարտների պահանջը բխում է ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում, ինչպես նաև աուդիտորական կազմակերպություններում իրենց ստացած որակավորմանը համապատասխան մասնագետների պահանջարկից:</p>
2.	Թարգմանություն և գործավարություն մասնագիտությամբ թարգմանիչ-գործավարի որակավորմամբ կադրերի պատրաստում	<p>Հիմնական կրթությամբ աշակերտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ):</p> <p>Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ):</p> <p>Հիմնական շահառուներ են հանդիսանում 15-ից բարձր տարիք ունեցող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:</p>	<p>Թարգմանիչ-գործավարի որակավորմամբ մասնագետների պահանջը կապված է ՀՀ պետական և մասնավոր կառույցներում օտար լեզուներին և գործավարի հմտություններին տիրապետող միջին մասնագիտությամբ որակավորում ունեցող կադրերով համալրման հետ:</p>
3.	Իրավագիտություն մասնագիտությամբ իրավագետի որակավորմամբ կադրերի պատրաստում	<p>Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ):</p> <p>Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ, իրավապահ համակարգի աշխատակիցներ: Գենդերային</p>	<p>Իրավագետի որակավորմամբ կադրերի պահանջը պայմանավորված է ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում համապատասխան մասնագիտությամբ կադրերի համալրմամբ:</p>

		անհամամասնություն չկա:	
4.	Բանկային գործ մասնագիտությամբ բանկային աշխատողի որակավորմամբ կադրերի պատրաստում	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	Բանկային աշխատողի որակավորմամբ շրջանավարտների պահանջը բխում է ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում, ինչպես նաև բանկային կազմակերպություններում իրենց ստացած որակավորմանը համապատասխան մասնագետների պահանջարկից:
5.	Նախադպրոցական կրթություն մասնագիտությամբ դաստիարակի որակավորմամբ կադրերի պատրաստում	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ:	Դաստիարակի որակավորմամբ մասնագետների պահանջարկը պայմանավորված է տարածաշրջանի մուր-մանկապարտեզները երիտասարդ մասնագետներով համալրելով:
6.	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում մասնագիտությամբ տեխնիկ-ծրագրավորողի որակավորմամբ կադրերի պատրաստում	Հիմնական կրթությամբ աշակերտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 15-ից բարձր տարիք ունեցող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	Տեխնիկ-ծրագրավորողի որակավորմամբ մասնագետների պահանջը պայմանավորված է հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի շարունակական ու սրընթաց աճով:
7.	Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ մասնագիտությամբ դիմահարդարի որակավորմամբ կադրերի պատրաստում	Հիմնական կրթությամբ աշակերտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 15-ից բարձր տարիք ունեցող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի	Դիմահարդարի որակավորմամբ մասնագետների պահանջարկը պայմանավորված է ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնմամբ:

		հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	
8.	Փոխադրումների կազմակերպում և կառավարում ավտոտրանսպորտում մասնագիտությամբ փոխադրումների կազմակերպչի որակավորմամբ կադրերի պատրաստում	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ:	Փոխադրումների կազմակերպչի որակավորումով մասնագետների պահանջարկը պայմանավորված է ՀՀ-ում տրանսպորտային միջոցներով բեռների տեղափոխման զարգացումով:
9.	Հայոց լեզվի դասավանդում մասնագիտությամբ հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորմամբ կադրերի պատրաստում	Հիմնական կրթությամբ աշակերտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 15-21 տարեկան ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	Հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորմամբ մասնագետների պահանջարկը պայմանավորված է Հայաստան-սփյուռք կապերի ընդլայնմամբ և մայրենի լեզվի դասավանդմամբ ու տարածմամբ:
10.	Դասավանդում տարրական դասարաններում մասնագիտությամբ տարրական դասարանների ուսուցչի որակավորմամբ կադրերի պատրաստում	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	Տարրական դասարանների ուսուցչի որակավորմամբ մասնագետների պահանջարկը պայմանավորված է հիմնական դպրոցներում երիտասարդ ու ժամանակակից չափորոշիչներին համապատասխան կրթություն ստացած կադրերի համալրումով:
11.	Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի տեղակայում ու շահագործում մասնագիտությամբ տեխնիկի որակավորմամբ կադրերի պատրաստում	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ:	Տեխնիկի որակավորումով մասնագետների պահանջարկը պայմանավորված է ՀՀ-ում գազօգտագործողների թվի ավելացումով:
12.	Ապահովագրական գործ /ըստ ճյուղերի/ մասնագիտությամբ ապահովագրական գործի մասնագետ որակավորմամբ կադրերի	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ:	Ապահովագրական գործի մասնագետների պահանջարկը պայմանավորված է ՀՀ-ում ապահովագրական ծառայությունների արագ

	պատրաստում	Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	զարգացմամբ:
13.	Ջերմատնային տնտեսություն մասնագիտությամբ տեխնիկ-ագրոնոմի որակավորմամբ կադրերի պատրաստում	Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ): Հիմնական շահառուներ են հանդիսանում 18-ից բարձր տարիքի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի և տարածաշրջանի հարակից գյուղերի բնակիչներ: Գենդերային անհամամասնություն չկա:	Տեխնիկ-ագրոնոմի մասնագետի պահանջարկ պայմանավորված է ՀՀ-ում զարգացող ջերմատնային աշխատանքների կազմակերպմամբ:
14.	Վարսահարդարում մասնագիտությամբ կարճաժամկետ դասընթացների կազմակերպում	Հիմնական շահառուներ են հանդիսանում ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ առանց ստացած կրթության որևէ սահմանափակման, տնտեսության համապատասխան ոլորտների գործատուներ ու նրանց աշխատակիցներ, գործազուրկներ, սոցիալական խոցելի խմբեր, տարբեր տարիքի իգական և արական սեռի ներկայացուցիչներ	Վարսահարդարի մասնագիտություն ունեցող կադրերի պահանջարկը պայմանավորված է ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնմամբ:
15.	Դիմահարդարում մասնագիտությամբ կարճաժամկետ դասընթացների կազմակերպում	Հիմնական շահառուներ են հանդիսանում ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ առանց ստացած կրթության որևէ սահմանափակման, տնտեսության համապատասխան ոլորտների գործատուներ ու նրանց աշխատակիցներ, գործազուրկներ, սոցիալական խոցելի խմբեր, տարբեր տարիքի իգական և արական սեռի ներկայացուցիչներ	Դիմահարդարի մասնագիտություն ունեցող կադրերի պահանջարկը պայմանավորված է ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնմամբ:

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջին ամրացված ակտիվների օգտագործման քաղաքականությունը

Ամրացված գույքն ամբողջությամբ օգտագործվում է Քոլեջի ուսումնական կարիքների համար: Նկատի ունենալով, որ վարձակալությամբ տրամադրվող տարածքներն ու գույքը որպես կանոն փչացվում են վարձակալների կողմից կամ առաջանում են խնդիրներ վարձավճարների ժամանակին վճարման հետ կապված, վերջին երեք տարիներին քոլեջի քաղաքականությունը եղել է որևէ տարածք կամ որևէ գույք վարձակալության չտրամադրելը: Այս քաղաքականությունը նախատեսվում է շարունակել նաև հետագայում:

հ հ	Անվանումը	Քանակը	Մակերես
1.	Ուսումնական մասնաշենք N1	1	1388.0
2	Մարզադահլիճ	1	305.0
3	Ուսումնական մասնաշենք N2	1	1598.6
4	Արհեստանոց	1	264.9
5	Կանաչապատ տարածք		7500.0
6	Ասֆալտապատ տարածք		1100.0